



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԼԱՅՈՂ ԱՇՈՒՂԸ

ՏԱԺԿԱՆՇԵՆԻ ԿԵԱՆՔԻՑ ՄԻ ՈՒՐՈՒՆԳԻԺ

ԳՐԵՑ

ՊԵՐՃ ԳԱՅՓԷՃԵԱՆ



891.99

7-26

Վ Ի Ե Ն Ն Ա

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1905.

ԱՅՈՂ ԱՇՈՒՂԸ

89633
7-26
37

01 JAN 2009

00 DEC 2011

ԼԱՅՈՂ ԱՇՈՒՂԸ

ՏԱՃԿԱՀԱՅՅԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ ՄԻ ՈՒՐՈՒՄԳԻԾ

ԳՐԵՑ

ՊԵՐՃ ԳԱՅՓԷՃԵԱՆ

1001
1355



Վ Ի Ե Ն Ն Ա

Մ Ի Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1905.

13 MAR 2013

24913

POST PAID 10

Ան ի սրտե

ԵՐԱՅԱԿԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ Է ԶԱՅՐԵՆԱԿԻՅԸ

ԱԽԱԼՑԽԱՅԻ

Ազնի

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԳԵՐԻՆ



ԱՇՈՒՂԻՆ

Սազոյ վնէր ստ, ինձ անցնակցիր,
Մեկ էլ յոռոյ տրգ տրգներ,
Վհաստութիւն մի կողմ՝ գցիր,
Միշտ ողբալո՛ւ շարու շներ:

Երբ ես տեսել գարուն գալիս
Չը կանաչի վարդեմին.
Կամ՝ սոխակին յառեալ շարիս
Երբ ծաղկում է սիրելին:

Տեսնել ես այդ, ո՛չ տեսել չես,
Արդ էր ես դու արտասպում.
Մենք էլ կը յիմենք միշտ այդպէս,
Մեզ էլ գարունն է սպասում:

Այն ժամանակ մեր հայրենիք
 կը լինի մեզ բացուած փարդ,
 Ու մեկը սորան սոխակ կը լինենք,
 Մի վնասողիք դու հայ մարդ:

Քո՛ էլ, ի՛մ էլ դարձող մեծ է.
 Մազդ վեր առ, երգ երգենք,
 Երգենք մի երգ, որ հեծեծէ,
 Էաց մեր ցաւերն ու շանք մենք:

Մենք ենք շարունակ, թէ չէ օտարն,
 Այդ չի գգայ ինչ որ մենք,
 Դէն, շուտ շարիր սագիդ շարն,
 Յառի, մանի երգ երգենք:

Մազդ վեր առ, ինձ ձայնակցիր,
 Մէկ էլ յուսոյ երգ երգենք.
 Վնասողիքն մի կողմ՝ գցիր,
 Միջտ ողորակն շարունակ:

Բան. Գ. Գ.



Ա.

Գարնանային մի գեղեցիկ օր էր:
 Երբ ելնող արեգակն իր ճառագայթները
 Տրեղէն ասեղների պէս սփռելով Մ. լեռ-
 ների կատարներին, հալածում էր նոցա
 վրայից գիշերուայ ընթացքում հաւա-
 քուած ամպերն՝ եւ կարծես ասում էր,
 “ Հեռու այդ տեղերից. դուք ձեր մնայլ
 տեսքով մի նսեմացնէք բնութեան գեղեց-
 կութիւնը, այլ թողէք, որ իմ ոսկի
 ցուրքերը՝ միայն իշխեն լեռների բարձունք-
 ների վրայ:”

Ու կարծես հասկացան ամպերը լու-
 սատուի միտքը. նոքա ծանր դժկամակու-
 թեամբ սկսան շարժուել, միայն երբեմն

կարծես չէին ուզում զրկուիլ իրենց
 դիրքից եւ մտնում էին ապահով տեղեր,
 լեռների ծմակները: Մի մասն էլ ցրուելով
 օդի մէջ՝ բարձրացաւ եւ վաղորդեան լոյսն
 ընկնելով նոցա գորշ գնդերի վրայ,
 ծիրանեգոյն նուրբ շղարշն էր նմանեցնում
 նոցա. որի միջեց աչերը բաց ու խուփ էր
 անում շեկագոյն արեւը, ամեն մի ակն-
 թարթում լոյսի նոր ցնցուղներ ցանելով
 մերկազագաթ լեռների վրայ: Ամենից
 առաջ արթնացել էին զգաստ լորերը, եւ
 այժմ արդէն առաւօտեան կիսախաւարի
 մէջ ճախր էին անում, եւ տարածում
 օդի մէջ իրենց ձայնի քաղցր ելեւէջ-
 ներն ու ախորժալուր ճռուողունները:
 Ղանդաղկոտ վեհութեամբ էր բացվում
 օրը: Արեւն, ասես, ընտանիքի ծերունի
 նահապետը լինէր. նա քնքոյշ գուրգու-
 րանքով մէկ-մէկ արթնացնում էր, իրմով

միայն կենսունակ, իրմով միայն երջանիկ
 զաւակներին. եւ նոքա սիրող արեւի շօշա-
 փումների խըտղին երկարատեւ եւ ան-
 տեսանելի մի համբոյրով էին պատաս-
 խանում: Ու կարծես դրանից սիրտ առած,
 նա շարունակ տեղափոխվում էր, հետ-
 դհետէ ուրիշ սիրելիների եւս բարի լոյս աւ-
 ետելու եւ հիացմամբ մտիկ տալու նոցա գե-
 ղեցիկ դէմքին: Նրա վեր շարժուելու վեհու-
 թիւնը, խորհրդաւորութիւնը անբռնելի
 եւ ուրեմն աննկարագրելի էր: Նրա ճառա-
 գայթններն ընկնելով ամեն մի առարկայի վրայ
 բեկրեկվում եւ սողոսկում էին արեւի շուրջը:

Լոյսի մի փունջ էլ Ա. լեռներին
 ընկաւ, որոնք սակայն խռովկան մանկան
 պէս կարծես նեղացած լինէին արեւից, որ
 նա իրենցից առաջ Մ. . . երին է պճնում,
 փոելով նոցա գլխին կուսական մագերին
 նմանուող շողերը: Նոցա ամպեղէն ծած-

կողը մեծ ալիքներով եւ գալարումներով այս ու այն կողմ էր ձգվում, աշխատելով պաշտպանել նոցա արեւից :

Անասորժ դրութիւնը շուտով պարզուեցաւ, երբ մի զգոուն հովիկ սուբալով անցաւ լեռների ճակատով, սանելով իր հետ նոցա մնայլութիւնը՝ կուտակուած մնուախուղը : Գետ էլի Ա. լեռներում արեւից պաշտպանուած ստուերոտ խանդուկներ կային, նման կորցրած փառքից յետոյ մնացած սեւ մտքերի, անլուր յուզման . . . : Գաշտն եւս պայծառացաւ եւ ի ցոյց դրեց երկնքին ու արեւին իր գեղածիծաղ պատկերը : Աւ այդ դաշտը արգաւանդ էր, եւ այդ ժամին նրա համար էր միայն վառվում արշալոյսն ու նրա համար էր գալիս աշխատանքի օրը : Արերի կկլոցի փոխարէն այժմ լսելի էին արտուտիկների ու սարեկների զուարթ աղաղակները :

Այդ ներդաշնակութեան մէջ, կարծես դաշտը լինէր գորգազարդ դահլիճ, իսկ լեռները պար բռնած դեռատի գեղատեսիլ հարսն - աղջիկ : Առքա տարածել էին դաշտերի վերայ իրենց լայնածաւալ փեշերը, որ իրենց ծաղիկներով յիշեցնում էին գեղուհու ծաղկազարդ շքազգեստը :

Այդպէս անվրդով բացուած օրուայ մէջ երբեմնակի միայն խիզախ ամպերը փակում էին արեւի երեսը, մթնացնում լուսաւոր օրը : Ա. լեռների երեսին խաւար էր իջնում, եւ կարծես նոքա, այդ լեռները, ջանք էին անում որոշելու, հասկանալու քամու բերած ձայները, լմբունելու նրա երգի միտքը, բովանդակութիւնը :

Բ.

Ա. լեռների այդ խորհրդաւոր լանջէն երկու ստուերներ երեւեցան: Նոքա ելնում էին մի լեռնախորշեց եւ դէպի դաշտն էին իջնում. ստուերների շարժուելը հաւաստիացնում էր թէ նոքա մարդիկ էին. եւ յերաւի մօտեցողները մարդիկ էին, ինչ մարդիկ, չէր կարելի գուշակել:

Խառն եղանակը նորից պարզուեց եւ երկու ուղեւորները մօտեցան շ. գիւղին. փոքր ինչ յետոյ նոքա մերձակայ բլրի վրայ էին եւ կարելի էր պարզ որոշել նոցա ուրուագծերը: Նոքա երկչոտ հայեացքներով զննում էին իրենց շրջապատը եւ երբեմն երբեմն իրար այս եւ այն կողմն էին մատնանիշ անում, ապա կրկին շարունակում քայլել՝ առանց այս ու այն կողմը նայելու, միշտ միեւնոյն ուղղութեամբ՝ դէպի շ. գիւղը:

Նոքա շտապում էին. նոքա փախչում էին: Բայց ո՞վ էր արդեօք նոցա հալածողը... եւ փախչում էին նոքա, անընդհատ փախչում: Նոցա դէմքերին դրոշմուած տառապանքի սեւ կնիքը ցոյց էր տալիս, որ նոցա անգութ ճակատագիրն էր հալածում, այն ճակատագիրը, որ ծանրանում է նոցա նման հազարաւորների վրայ, նոքա փախչում էին իրենց նմանների անգութ վարմունքից... փախչում էին առանց հաշուի առնելու իրենց ճանապարհը — գնում էին փրկուելու համար միայն:

Թէ ինչ էր սպասում նոցա օտար երկրում, չգիտէին. եւ այդ մասին չէին էլ մտածում. գնում էին իրենց եղբայրների մօտ՝ պատմելու դառն աղէտը, կարեկցութիւն շարժելու, պատսպարուելու, նոցա սրտապարար ջերմութիւնը վայելելու: Նոքա աւելի եւս մօտեցան. գալիս էին դաշտի

միջով, հիւճուած, յոգնած, տանջուած, բայց կրկին եւ կրկին շտապով. երբեմն քարի մի կտոր ոտների տակն էր ընկնում, սայթաքեցնում նոցա, բայց նոքա ձեռքի երկայն փայտի օգնութեամբ հազիւ հազ պրծնում էին ընկնելուց ու շտապում...:

Այո, շտապում էին նոքա դէպի գիւղ՝ մի մի կտոր հաց մուրալու, որպէս զն սովեց չմեռնին: Աարձ ժամանակից յետոյ նոքա արդէն դէպի գիւղ տանող ճանապարհի վրայ էին:

Ասելի էր արդէն նոցա ոտնաձայնը եւ քարերին կպչելուց առաջացած փայտերի չրխկոցը: Գրա հետ միասին մէկ աններդաշնակ հծծիւնի մէջ էին ձուլվում նոցա միացող կրճքերից դուրս պոռթկացող լալահառաչ “ան,երն ու “օՓ”, երբ:

Հեռուից մօտենում էր գիւղի հովիւը իւր առջեւից մի հօտ քշելով: Նա իւր

արինդն էր փչում եւ նորա նուագը միախառնվում էր անհոգ դատնուկների միամիտ մայունին. նորա նուագի հնչեւները ծաւալվում էին դէպի հեռուն, շատ հեռուն:

Շներից ազատուելով, փախստականները մօտեցան հովուին:

— Բարի օր քեզ, խայ ախպեր:

“Ասործու բարին. որտեղից էք գալիս ախպրաիք,“:

— Ահ... լսուեցաւ միայն եւ այդ ձայնարկութեան մէջ զգացվում էր վերջին օրերում կրած ամբողջ տառապանքը՝ իր դաւադրութիւններով, ահարկութեամբ եւ տագնապներով:

— Ար փախչենք, լսուեցաւ թախծալի ձայնով:

“Հն, — ձայնեց հովիւը այնպիսի մի արտայայտութեամբ, որից չէր կարելի

խմանալ, ցաւո՞ւմ էր նա, հեգնո՞ւմ, թէ
անտարբեր կերպով լսում էր ճակատա-
զրահան այդ խօսքը: Ու սկսեցին նոքա
խրար զննել: Հովիւք արտաքինով պարզ
զիւղացի էր. թուիս դէմքով, սեւահեր,
բարակ բեխերով եւ անմօրուք: Նա
կարծահասակ էր, անշուք հագնուած եւ
մէջքին ամբացրած ունէր հացի կապոցը,
իսկ նրանից ցած սրինգը, մի խօսքով
հովուական տարազով: Ակուորներից մինը
նայնպէս սեւահեր, բարձրահասակ, փար-
թամ, լայնաթիկունք, երկար բեխերով
մի մարդ էր, կլոր դէմքով, մեծ մեծ
աչքերով: Միւսը նիհար, բայց ջղոտ էր,
արծուի հայեացքով եւ ճաղատ գլխով,
կազմուածքին համապատասխան երկայն
դէմքով: Սոցա երկուսի դէմքերն էլ փոշով
էին ծածկուած, առանց այն էլ նոցա ա-
րեւակէզ երեսն անշքացնում էր: Ար-

կուսն էլ այժմ ցնցոտի էին հագել. նոցա
կարճ բաձկոնակների ներքեւում գոյնզգոյն
դօտիներ էին կապուած, որոնց ծալքի մէջ
ծխամորձների էին գտնվում. նոքա տրեխ-
ներ էին հագել: Արկար խօսելուց յետոյ
նոցանից առաջինը՝ Վերոբ անուկով, ընդ-
հատուող եւ երկչոտ ձայնով դիմեց հօ-
վուին:

— Ախպէր ջան, փշուր մը խաց չե՞ն
տար. քանի օր է անօթի ենք, քաղցից,
նայէ, ինչքան ենք մնաշուած:

Հովուի դէմքը լըջացաւ. եւ նա
պատասխանեց:

«Վեզ որ տալու էղնիմ, ես ապա
ինչ ուտեմ. ինձ որ օգտի, լաւ կը լինի,
քէլէք գեղը, մէկից առէք, կերէք, էլե՛ս»:

Պանդուխտները լուռումունջ վշտա-
ցած սրտով արտում քայլերով, առաջ
անցան դէպի դիւղ:

“Վալչ են եկել, էլի կ'աւելնան. մեզ սովամահ անելու միտք ունին», յետեւ ներից մրթմրթաց հովիւը:

Գ.

Մի տարի էր անցել:

Նոյն բարեհամբոյր եղանակով բացվում էր օրը:

Վերորն ու իր ընկեր Արտաշէսն արդէն առժամանակեայ բնակութիւն էին հաստատել զիւղում: Թէ ինչ նեղութեամբ եւ երեսթքանքով էին նոքա շ. զիւղում ձեռք բերել մուրացած հացի առաջին պատառը, աներեւակայելի է: Բայց նոքա չընկճուեցան եւ հազար ոտ պաշելուց յետոյ՝ արդէն գործ էին գտել: Արտաշէսը զիւղի նախարպանն էր, իսկ Վերորը՝ տէր-տէրի գութանաւորը: Արեւի լոյսը զեռ զիւղին չէր առել, երբ աքաղաղ-

ները բնագլխամբ նկատելով երկնքի հետզհետէ լուսաւորուիլը, սկսել էին իրենց երգը. կանայք վեր էին կացել ու աան ու տեղն ուղղում ու բակը սրբում, յետոյ ջուր բերում ու անային գործերին ձեռք զարնում. տղամարդիկ էլ իրենց գործին էին շատապում: Ուէսը ահագին աղմուկով զիւղը ծայրէ ի ծայր չափչփում էր: Անասունների մայիւնն ու բառաչը ականջ էր խլացնում: Հետզհետէ ձայները դադարում էին. մարդիկ ցրվում էին դաշտերը: Շուտով ժամերգութիւնն էլ վերջացաւ եւ տէրտէրը զիւղի հասակաւորներից շրջապատուած դուրս գալով նրատեց մի արեւոտ տեղ զրոյցի:

Այդ միեւնոյն օրը Վերորն շատ վաղ, չորս լուծ եղ լծած գութանը, խոփը վերքաշած, գնացել էր վար անելու: Նա արիւն քրախնք մտած աշխատել էր, ինչպէս

միշտ. եւ երբ արդէն երկնքի աչքը իւր շողերն էր սփռում, նա դադար էր առնում, որպէս զն նորից բարեխղճութեամբ գործն սկսի:

Նա արդէն հաց կերել էր:

Եւ դ՛ ժամանակ մօտից անցնող հովիւը — հէնց նա, որ զիւղ մտնելու առաջին օրը Վերորին պատահել էր, անկարեկցաբար բարեւեց, նստեց նրա հետ մի քիչ զրուցելու:

Նոքա սկսեցին միմեանց պատմել իրենց դարտերից, իրենց հայրենիքից, ազգականներից: Արբ հովիւն իմացաւ, թէ Վերորն սրինգ նուագել զիտէ՝ նրան մեկնեց սրինգը եւ խնդրեց մի բան նուագել:

Վերորը նրա խնդիրը կատարեց...

Եւ դ՛ երգ չէր, այլ Աստուած, Ադեմ, ազնուութիւն, սէր, անանց երանութիւն: Արնդի ձայնը մերթ հնչում էր պարզ,

մերթ թաւ, մտախոհ, մէկ էլ յանկարծ վշտոտ ճչի էր նմանվում, նորից խրոխտ ինչպէս նետահար առիւծի մոնչիւնը:

Նա յանկարծ լռեց, անձայն յանձնեց հովիւին սրինգը եւ գլուխը կախ գցեց, կարծես զառանցանքի մէջ ընկաւ: Վիչ յետոյ գլուխը նորից բարձրացրեց, ցոյց սալով իւր թաց աչքերը. — նա լալիս էր: Ու քիչ յետոյ՝ կերկերող ձայնով, ինքն իրեն, բայց լսելի կերպով սկսեց խօսել:

— Չը լինէր այս տեսակ կեանքը, երբ հացն իմ եղբայրներից երեսիս թուր ու մուր ածելով էի ստանում. ինչո՞ւ ես այստեղ եկայ, եթէ այս պիտի լինէր իմ վիճակը... ու քիչ լռելուց յետոյ՝ կարծես մտքի յետեւից ընկած ասաց: — Բայց այլ կերպ էլ չէր լինի. կեանք է է՛հ, չէ որ կը սպաննէին ինձ, եթէ մնայի այնտեղ: Ե՛հ, մեր հողն ու ջուրն էր, քանի մեզ կրակ

չէր դարձել. իսկ երբ մեր կեանքը վստանգի մէջ ընկաւ, երբ բոլորին սպառնացող մահը մեր աչքին երեւաց, մենք վհատուեցանք, մենք թուլացանք, եւ ամեն ինչ մոռացուած, մտածում էինք, թէ ինչպէս փրկենք մեր կեանքը եւ մենք՝ մեզ սնունդ տուող հողն ու ջուրը, մեր սիրելի վաթանը թողեցինք, թողեցինք միայն մեր կեանքի մասին մտածելով, միայն մեզ փրկելու նպատակով եւ մենք փախանք, փախանք թուլասիրտ երկչոտ սրտերով ու Հայրենեաց կարօտով:

Բայց դու, էյ, սար, դու հօ կարող էիր մեր առաջն առնել, բայց այդ չարիր, ժէռ սար, դու այդ չարիր: Ինչո՞ւ, երբ քո լանջքով փախչում էինք, դու չքանդուեցիր, մեզ տակով չարիր: Ինչո՞ւ ինձ հէնց այնտեղ կենսազուրկ չարիր, ուր իմ մէկ ու ճար ջիւանը աչքերը փակեց. քո

արածը ծաղը էր՝ հա՛... այն ժամանակ երբ ես կարծում էի, թէ իմ հոգու հատոր զաւակի հետ գոնէ ազատուած ենք, դու, սար էյ, խլեցիր նրան ինձնից, ինձ էլ չոր գլուխ գցեցիր օտար հող վրայ: Վանդուիր սար, ծածկիր լանջքիդ հանգած իմ ջիւան աղին, թող երկինքն էսպէս ծիծաղկոտ երեսով նրան չը նայի. կամ տակով արա մեր արխնատուած անօրէններին, երբ նոքա մեզ սուր էին քաշում, դու լուռ կանգնած հանդիսատես էիր. դեռ ուշ է՛, քանդուիր, կործանուիր, սար, կործանիր եւս անօրէններին: Արկինք, որ այդպէս ուրախ փայլում ես գլխիս վերեւ, կրակ թափիր անօրէնների գլխին, այրիր, խանձիր նրանց, հեղեղ անձրեւ թափիր, խեղդիր, ապա թէ ոչ մեր քրտինքով վարած դաշտերն ալ կարեն նոցա գերեզման լինել, մեր թափած արիւն պոչուկները

1001
1355



ալ կարէ հեղեղ դառնալ, խեղդել մեզ խեղդողներին: Նա այլ եւս չէր գգում, թէ ինչ էր խօսում, “այո՞ անէծք էր թափում”, : Վարժես թէ դաշտի միւս կողմը մինը լինէր, որի հետ նա խօսում էր, դէպի լեռները նայող նրա մեծ աչքերը արտասուքի աղբիւր էին դառել, ուռողում էին կրակուած կուրծքը: Հովիւը շուարած մի կողմն էր կանգնել եւ դիտում էր նրան, երեւի կարծելով թէ՛ խենդացել է նա: Նրբ Վերորը ուշքի եկաւ եւ լռեց, հովիւն արդէն հեռացել էր...:

Գ.

Հասել էր կիւրակին. ուխտի օր էր: Նախընթաց օրուանից գիւղն էին լցուել հարեւան գիւղացիք: Նոցա մեծամասնութիւնը գանվում էր իրենց բարեկամների մօտ եւ այսօր պարապութիւնից գիւղն

էին աչքի անցկացնում. թէպէտ տարեց տարի այն էլ տարին մի քանի անգամ լինում էին այդտեղ: Նոցա հետ էին շրջում գիւղի տղամարդիկ տօնօրեայ շորերն հագնուած: Նոքա մեծ հետաքրքրութեամբ սպասում էին պատարագին, որ գիւղ տեղում մի հազուադէպ բան է: Իսկ գիւղի կանայք կամ հագնւում էին, զարդարվում ժամ գնալու, կամ տունն էին մաքրում: Գիւղում ամեն ինչ հանդիսաւորութեան կնիք էր կրում:

Ուխտաւորների մի փոքր մասն էլ իջել էր ուղղակի եկեղեցու բակը, որ մի ընդարձակ կանաչադարձ տարածութիւն էր ներկայացնում: Այստեղ մի կողմ լծից արձակած եզներն էին արածում կովերի եւ գառնուկների հետ: Միւս կողմը կարգով շարուած էին բեռնաւորուած սայլերը: Բակն ամբողջապէս ծածկուած էր գոր-

գերով, որոնց ամեն մինի շուրջը մի քանի մարդ աշխատում էին կարգի դնելու որ Հէնց ժամերգութիւնը վերջանայ, քէ՛Ֆերն սկսին: Պարբասների մէջ շարուած նստած էին աղքատները եւ ահագին աղմուկ էին հանում իրենց մուրալովը:

Եկեղեցում սկսեցին անկանոն զանգա-
հարութիւն, երբ աղքատիկ հաղնուած
մի զառամեալ քահանայ ներս մտաւ:
Ժողովուրդը խառն հոսանքով ներս
խուժեց: Ամեն ուխտաւոր պարտք էր
համարել առ նուազն երկու զոյգ մոմ
ընծայել եկեղեցուն: Պատարազն սկսուել
էր եւ մոմերի լուսաւորութեան մէջ այն-
զարդ քահանան վեհութեան մարմնացում
էր դառել: Նորա ամեն մի երեւան գալը
կարծես ստիպում էր մարդկանց ծունր
դնել ու խաչակնքել: Ժամերգութիւնը
վերջացաւ: Ժողովուրդը զրոհ տուեց

զուրս եւ ցրուեցաւ բակի մէջ: Բոլորն
սպասում էին քահանային, որ ժողովրդին
երկար սպասել չտուեց: Հէնց որ նա
ելաւ, չորս կողմից հրաւերների ձայներ
լսուեցան. — Տէր-տէր, մեր հացն
օրհնիր:

— Տէր-տէր, էստեղ արի:

— Տէր-տէր համեցէք էստեղ, կար-
գիդ մատաղ լինիմ:

Աշուղները, քամանչեք, զուռնաչեք
արդէն սկսել էին իրենց երգն ու նուազը:
Բոլոր նուագողները ամենն էլ անշուք
էին, մինը միւսից չէին զանազանվում եւ
ամեն մէկը ձգտում էր որ իւր երգերով
շատերին զրաւէ, բոլորը միասին մի ան-
կանոն համերգ էին կազմել: Բայց ամենն
էլ գրեթէ անուշադիր էին մնում, մի
տեղ միայն մի փոքր խումբ լսում էր մի
ինչ որ անյայտ աշուղն երգերը: Արեւի

երգածը գրաւիչ էր որ մարդիկ քանի
զնում շատանում էին :

Առեցին միւս բոլոր երաժիշտները եւ
այդ ժամանակ մի ուժեղ առնական ձայն
քամանչայի ձայնակցութեամբ երգել սկսեց .

“Դարսս մեծ է, անցոռորսման,
Լսիր, քեզ էլ բաժին հասնեմ’ .
Լսիր, ցառիս արն դարման,
Անկարեկից ես ի՞նչ անեմ’ :

Մեր դաշտ ու արտ դառան արիւն,
Ա՛խ, սուրբ վանքեր կողոպտուեցան .
Մեր տունն ու տեղ թարան արիւն,
Անտուն անտեր նդանք ցիր ցան :

Հայրենիքից զրկուած օտար .
Չենք իմանում, թէ ո՞ր դիմենք .
Թողած մեր տունն մեր հայր ու մայր,
Անգռնթ բաղդի խորթ որդի ենք
Ա՛խ ո՞ր դիմենք :

Դարսսու մայրեր շատ լաց նդան,
Շատ ողբացիկ մեր քուերտիւնք,
Ա՛խ, մեր խոցերն բազմագան,
Բայց վիրարոյժ մենք մարդ չունինք :

Մեռ է պատեղ, սեռ մեր երկիր,
Մեռ է պատեղ եւ մեր արտեր .
Ի՞նչ մարդ չունի մեր խեղճ երկիր,
Որ լաց լինի իր սեռ դարտեր : ,

Ու երգողն աչքերից կկլալով վայր
էին թափվում արցունքի կաթիլները . նա
ասես չէր տեսնում իր առաջ յուզուող
ամբօխին . նրա ուշ ու միտքը երգած
ցաւերն էին :

Արգը վերջացնելուց յետոյ մի առ
ժամանակ նա անթարթ աչքերով երկնքին
էր նայում . կարծես այնտեղից մի հարցի
պատասխան էր սպասում լսել . . . : Արգողը
Վերորն էր :

— Չէնդ անապատ, ջան է՛յ, գոչեցին
ունանք յանկարծակի զգտցուած մարդու
երկչոտ ձայնով :

“Որ էդ երգի փոխարէն մի տրնկի
ածէիր, լաւ չէր լինի, ես էլ պար դայի.
ասաց մի թեթեւամիտ ջահիլ, :

— Սոսկուիր, տղայ, — սաստեց
մի հասակաւոր մարդ : — Վարիր եղբայր,
պատմիր մեզ, ո՞վ ես դու. ո՞րտեղեց-ես
եկել, ո՞ւր ես գնալու, եւ ի՞նչ էիր
երգում :

Ե.

Վերորը ցնցուեցաւ. յանկարծ նրա
երեսը պայծառացաւ, կարծես հէնց այն
պատճառով, որ իրենով էլ ի վերջոյ
հետաքրքրուող եղաւ. բայց իսկոյն էլ
յորդահոս արցունքը առժամանակեայ
ուրախութեան փայլը քշեց նրա զէմբից :

Նա մէկ խոր շունչ քաշեց եւ կարծես
ուզում էր սկսել իր պատմութիւնը, բայց
այդ բոլորից առաջ մի աղէկատուր “օ՛Ֆ,,
հանեց : Խսկ երբ հանդստացաւ, մէկ-մէկ
արտասանեց իրեն տուած հարցերը, կար-
ծես այն երազն մէջ էր լսել եւ այժմ
ուզում էր ըմբռնել նրանց բուն նշանակու-
թիւնը :

— Ո՞վ եմ ես, ո՞րտեղեց եմ եկել,
ուր եմ գնալու... եւ ի՞նչ էի երգում... :

Ո՞վ եմ ես : Ն՛հ, ո՞ւմ է պէտք, թէ
ես ո՞վ եմ, ո՞ւմ է այդ հետաքրքրում : —
Ոչ ոքի. այսքան ժամանակ սազը ձեռքիս
ման էի դալիս, իմ դարտերն ու ցաւերն էի
պատմում, իմ հայրենիքի, իմ եղբայր-
ների ցաւերը եւ ձեզանից ոչ ոք չըմբռնեց
իմ ներքինը, իմ արիւնտա սիրտն եւ
հոգին : Նա անդադար թափառեցի այստեղ,
ձեզ մէջ, այս եւ այն կողմը զիւղեց զիւղ,

տնից տուն անդադար երգեցի, պատմեցի
իմ ցաւերն եւ այժմ դուք նոր հարցնում
էք, թէ ո՞վ եմ ես, սրտեղեց եմ եկել . . .
Սինակ գիտէիք իմ անունը, որ Վերորէ է:
Ես էլ հէնց կ'ասեմ որ Վերորէ է իմ
անունը. եւ կրկին կը պատմեմ այն՝ ինչ
որ այժմ հետաքրքրում է ձեզ: Ես իմ
հայրենիքի աչքի ընկնող աշուղն էի, ինձ
բացի մեր գիւղացիներից, ճանաչում էին
ըջակայ բոլոր շինականները. ոչ մի ծնունդ,
տօն, քէֆ, հարսանիք չէր լինի առանց
ինձ. ես ամենից էլ սիրուած էի եւ
ամենին սիրում էի, ու ես էի նրանց
ուրախացուցիչը եւ վշտացած սրտերի
մխիթարիչը: Ահ, էս էլ ես, հիմայ մի
խեղճ աշուղ եմ, վտարուած, անտուն
անտէր . . . իմացա՞ք:

— Աւա, լաւ վնաս չկայ, հիմայ
պատմիր, թէ ինչ ձախորդութիւն քեզ

մեր կողմը ձգեց ու սրտումդ ինչ կայ,
ասացին ունկնդիրները:

— Այդպէս, դուք ինձ չճանաչեցիք,
որ ասացի թէ աշուղ Վերորէն եմ. բայց
աւելի լաւ կը ճանաչէք, երբ ասեմ, որ
խակապէս մի խեղճ գաղթական եմ, տնից-
տեղից զուրկ, ազգականից զուրկ մի մարդ
եմ ես, որ ես մի որդեկորոյս հայր եմ . . .
Չեղանից շատերն էլ կ'ասեն, թէ մենք էլ
ենք որդեկորոյս. բայց ձեր դարտը չի
հաւասարիլ իմին. ես կը պատմեմ, յետոյ
դուք գատեցէք:

“Շինդ եղբայր էինք մենք եւ մեր
հայրը գլխներին, բոլորս էլ իրար հետ սիրով
ապրում էինք, բոլորս էլ կարգուած եւ երե-
խաների աէր: Ես չորս ջան երեխայ ունեցայ,
բոլորը մեռան, մինը մնաց, իմ աղեղ Աւե-
տիքը, : Արցունքի մի կաթիլ ցայտեց աչքից
եւ սահելով պահ մտաւ խիտ բեխի տակ:

Քերտքն իրեն զսպեց եւ շարունակեց .

— “Մենք բողոքաւոր էինք, հայրս մեզնով, մենք մեր հօրով . ես Նարգէկովս ու Աւետիքով, նոքա ինձնով : Բայց սեւ էր գրած մեր ճակատին, գուլումն սկսուեց : Օր օրի վերայ նոր-նոր խաբարներ էին գալիս, նորանոր փախչողների հետ : Աս էլ լացս երգ էի շինում ու ինչպէս հիմայ ձեզ մօտ երգեցի եւ խօսում եմ, այնպէս էլ այնտեղ : Աս գիւղեց գիւղ շրջում էի, երգում ու խօսում : Մէկ էլ ես, երբ մեր շրջակայ գիւղերից մէկում էի, լուր առայ, թէ մեր գիւղն էլ է կոտորած ընկել : Ուշքս կորցրած էլ չեմ իմացել, թէ ինչ տեղերով եմ գեղ գնացել . ճանապարհներին ինձ ոչ քիւրդ պատահեցաւ, ոչ տաճիկ : Բայց կոտորուէր իմ ոտքը, ես գեղ չհասնէի : Ա՛խ, ուր էր, թէ անօրէնի մէկն էլ ինձ հէկեց ճանապարհին սպաններ, ձգէր . . . :

Մեր գիւղն ամբողջ կործանել էին, մարդկանց սրի բերան տուել : Թէ մարդ էլ ազատուել էր, փախել էին սարերը . . . : Տները կրակ էին տուել, ծուխը երկինք էր հասել : Մտայ գիւղը, մարդ չկար, էլ հօ տուն ու տեղ իրարից չէին ջոկվում : Ու ես մեր տունը չէի գտնել, թէ որ եկեղեցու կողքին չը լինէր : Պնացի : Ամենն աւերակ . . . : Ներս մտայ բակը . . . : Ու նա լուեց, անորոշ մի կէտի բեւեռեց աչքերն ու անշարժացաւ : Յետոյ յանկարծ նրա բոցակիզուած կուրծքը դուրս ժայթքեց հրաբուխի նման վշտերի հուր ու բոց . . . : Նա թուլասիրտ էր դարձել անվերջ աղէտներից : Ու կուշտ լաց լինելուց յետոյ՝ նա շարունակեց .

— “Վա՛ սիրելիներին գտայ՝ վզները կարատած, շատերի գլուխը ձեղքուած : Մօտ գնացի, մէկը շարժուեց . մօտ գնացի . . .

Աւետիքս էր այն, զի զաւակս էր այն, գրկեցի...: Նայեցի, գննեցի... ապրելու յոյս կար, գլխի վերքը խակոյն շորեցս պոկած կտորներով կապեցի եւ թիկն տուեցի վրած պատին: Յետոյ մեաներին էլ նայեցի... ես իմ սիրական Նարգիզին էի փնտռում: Բայց նա չկար. կամ մնացել էր աւերակների տակ, եւ կամ եւ կամ...: Ահ, հօրս էլ մեռնելիս դտայ, ու նրա վերջին խօսքն էր. մնաս բարով իմ սիրելի որդի, ես օրհնում եմ ճանապարհդ, փախիր հեռու այս գաղանների երկրից... Ու նա էլ հայրենիքի քաղցր հողը գրկելով անշնչացաւ: — Իմ մեռելն թաղելու համար՝ գէթ հողոց ասելու, ես տէր-տէր չունէի: Նրանց գերեզմանը բաց օդն էր, սաղմոսը իմ սուգը: Ու տալով նոցա վերջին համբոյրս, առանց իմ ազիզ կողակցին վերջին անգամ տեսնելու՝ ես,

Արտաշէսը — էս որ իմ կողքին գլխակոր նստած է, — ու իմ տաննչորս տարեկան Աւետիքը թողնէք երկիրը,»:

9.

Նա նորից արտասուեց:

Ուխտաւորների ահագին բազմութիւնը նրա առաջ կանգնած, ասես քարացել էր: Արծես նրա վերջին խօսքերը այդ կենցաղասէր մարդկանց սրտերի վերայ ազդեցին. նոքա գլխաքարչ լուռ կանգնել էին լացող երգչի առաջ. իսկ նա կարծես էլ նոյն լացող մարդը չէր, փոխուել էր. նա նայում էր ժողովուրդին համարձակ հայեացքով, եւ կարծես այլ եւս հարցի պատասխան չէր որոնում, այլ գտել էր այն՝ եւ այժմ անզխտակ գլխի շարժումով ասում էր. «Այդպէս է, այդպէս,»:

Ոչ ոք սիրտ չէր անում նրան մի-
թարեւու մի երկու խօսք ասելու. զժբաղդու-
թեան մարմնացած ոգին բոլորի էլ լեզուն
կարկամեցրել էր, ի վերջոյ նորից ինքը
երգիչը սկսեց խօսել.

— «Թողնէք թողնել երկիրը . . .
Ո՞ր մարդը այդ կանի, ինչ չարիք էլ որ
նրան այնտեղ պատահի: Գուք ձեր սուրբ
հօղը երբ եւ իցէ կը թողնէք. ոչ, մի ու-
րիշը այդ բանը կանէր. ոչ ոք, բայց մենք
արինք: Մենք թողնէք երկիրը, փախանք . . .
Յերեկները մենք պահում էինք ձորերում,
որ անօրէնի աչքը չառնի մեզ, ասա ինչո՞ւ.
էլ ո՞ւմ համար էինք մեզ պահում, մեր
չոր գլուխը ո՞ւմ համար էինք խնայում.
մեզ — մեզ համար: Մենք ճամբայ էինք
գալիս միայն գիշերները ու էն էլ թէ
ինչ նեղութիւններով. Աստուած միայն
գիտէ:

— Արեք օր եկել էինք. վախից ոչ
գիշերն էինք ման գալիս հաց մուրալու եւ
ոչ ցերեկը՝ ծարաւ անօթի. մենք սարերով
էինք անցնում: Մենք, ես ու Արտաշէսն
էլ մեծ էինք ու սովին դիմանում էինք,
բայց իմ ազիզ բալէն հէնց հաց ու հաց
էր կանչում . . . երկար մենք եկանք եւ երբ
փրկութեան դռանն էինք Ա. լեռների էն
փեշին, ջիւանա չկարողացաւ գալ. մինչեւ
էն օրը նա զօռով էր եկել, ոյժը հատաւ:
Զօլ տեղ, ոչ գեղ ու դարման կար մեզ,
ոչ ճար. նրա գլխի վերքն էլ արիւնաքամ
էր դարձնում նրան, նստանք. Աւետիքս
գլուխը վար դրեց. ես նրան զարթացնելու
համար ջրի տեղ խոտ էի քաղում փռում
երեսին, սիրտ էի տալիս. թէ հա՛,
հասնում ենք, կը հասնենք, հաց կը
ճարեմ, կ'ուտես, վերքիդ ճար կանենք,
չեղաւ . . . նա կամոց-կամոց սրպրանում

էր, էն սիրուն նուազած աչքերը բաց ու խուփ էին լինում. վերջին անգամ էլ յետ մտիկ տուաւ մեր եկած ճամբէն, ասեց. «վայ մեզ, վայ անուշ վաթան էլ չպիտի յաւիտեան տեսնեմ քեզ, քո կարօտով այրուած փակում եմ նուազած աչքերս,» :

Ու նա էլ անշնչացաւ . . . :

— Նրա էլ գերեզմանը փրկութեան ճանապարհին եղաւ Ա. սարերի կանաչ գլուխը վկայ: Աս ուզում էի իմ ջլեանին մնա՞ դառնալ, կողքին անշարժ մաշուիմ, հալուելիմ, մինչեւ վերջանամ, կամ մի քիւրդ էլ զօռով իմ կեանքը մարէր. ուզում էի էս միացող սիրտս նրան խունկ ու պատարագ անեմ, չեղաւ: Արտաշէսը չթողեց. նա ինձ զօռով հեռացրեց: Այլ տէր-տէր չկար, իմ դառնաղի լացն եղաւ վերջին հոգոց Աւետիքիս, իսկ էդ վերեւ կախուած երկինքը բեմ, ու ասողերը — էն

գիշերուամիջի սառն ասողերը, — յաւիտենական ջահեր ու վիհներ: Նրան էլ էնտեղ թողինք դողդողուն ձեռքով իմ արիւնաքամ ջլեանուս Հայրենեացս սուրբ հողին յանձնելով՝ բիւր անգամ ան ու վախով հեռացայ իմ հայրենական պաշտելի վաթանից, ու մենք եկանք ձեզ մօտ: Աստեղ ինչ որ եղել է ձեզ արդէն յայտնի կը լինի. իսկ եթէ յայտնի էլ չի, հետաքրքիր էլ չի:

Այսպէս, ես մի գաղթական անմխիթար հայր եմ. եկել եմ երկրից եւ նորից գնալու եմ մեր երկիրը:

Նա ինձ քաշում է, ես էստեղ մնալ չեմ կարող, վաթանիս կարօտը մեծ է, ես պիտի գնամ: Հա՛, մէկ էլ ուզում էիք իմանալ, թէ ինչ էի երգում:

— Աս այդ արդէն պատմեցի, իսկ թէ պարզ չեղաւ, նորից ասեմ:

— Իմ երգածը Հայրենիքիս քաղած
ցաւերն են, դարտերն են. ես եկել եմ իմ
եղբայրների համար երգելու իրենց եղբայր-
ների ցաւերը,՝:Վա լուեց:

— Համեցէք, Վարդը ջան, սուփրի
վրայ, դեռ մեր ուխտի օրն անցկացնեք,
յետոյ քո դարտին էլ մի ճար կ'անենք:

— Չէ, ես ուրախանալ չեմ կարող
ձեզ հետ, ես էլ էն Վերոբը չեմ. ես
հիմայ ցաւի, վշտի ու անիրաւութեան
երգիչ եմ. երգածս միակ իմ դարտը չէ,
այլ եւ իմ Հայրենիքի: Աս մի տարուայ
աշխատանքովս առած սաղն է հիմայ իմ
ընկերը:

Արտաշէս, եղբայր սիրելի. ես քեզ
թողնում եմ, բայց էլի կը տեսնուինք:
Տէր-տէր, էլ ես քո տան ծառայ չեմ,
ողջ եղիր, մնացէք բարով: Ղուք ուրա-
խացէք, ես գնում եմ նորից լալու եւ

երգելու: Վա համբուրուեց իր ընկերոջ
հետ, միւսներին էլ մնաս բարեւ սասց եւ
սկսեց մեկնիլ: Այդ ժամանակ ուխտաւոր-
ներից շատերը մօտեցան եւ մի-մի բան
բաշխեցին նրան պատահելիք կարիքների
դէմ կռուելու համար:


Վա գլխի ցնցմամբ եւ շրթունքների
անձայն շարժմամբ շնորհակալ էր լինում:

Աւ սաղը ձեռին անյողողող դէպի
դարպասը քայլեց:

— Այլ մեզ մօտ կը գաս. — հարցրին
մտամոլոր շատերը. զգալով որ այժմ էլ
նրան պահել չէն կարող:

Ար գամ, յուսով եղէք...:






«Ազգային գրադարան»



NL0326909

24913



Грѣа ѿ 15 цоц.:

Грѣа ѿ Ахалцыхъ (Кавказъ).
Перчу Кайфаджяну.